

Տեղեկատվական ամփոփագիր		
Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող հիփոթեքային վարկ		
Հիմնական պայմաններ		
Տրամադրման ռեսուրս	«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»	«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»
Վարկի նպատակը	ՀՀ-ում բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, անհատական բնակելի տան (ատաղնային և երկրորդային շուկայից) ձեռքբերում	ՀՀ-ում բնակելի նշանակության բնակելի անշարժ գույքի ձեռքբերում
Հաճախորդի նպատակային խումբ	Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային պետական աջակցության ծրագրի շահառու	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Վարկի ժամկետ	120 ամիս	
Վարկի նվազագույն գումար	սկսած 2.000.000 ՀՀ դրամ	
Վարկի առավելագույն գումար	Մինչև 35,000,000 ՀՀ դրամ	Մինչև 22,500,000 ՀՀ դրամ
Կանխավճար	Կատարվող կանխավճարի նվազագույն չափը կազմում է առաջնային և երկրորդային շուկայից ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի գնահատված և ձեռքբերման արժեքներից նվազագույնի առնվազն՝ • 10 տոկոս՝ Երևան քաղաքում • 2.5 տոկոս ¹ ՀՀ մարզերում • 1 տոկոս ¹ , եթե աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղական բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար կամ, եթե շահառուն ունի առնվազն 4 անչափահաս երեխա կամ հավաստագրում ներառված ընտանիքի բոլոր անդամների 65 տարին լրացած է: ¹ Եթե վարկի գումարը գերազանցում է սուբսիդավորվող վարկի գումարը, ապա նվազագույն կանխավճարը սահմանվում է 10%:	
Տարեկան անվանական հաստատուն տոկոսադրույք	10% • ՀՀ սահմանամերձ բնակավայրում անշարժ գույք ձեռք բերելու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից բազմաբնակարան բնակելի շենքում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու դեպքում վարկի տոկոսադրույքը և տոկոսադրույքի սուբսիդավորման չափը կազմում է 13%: • ՀՀ կառավարության 17.02.2022թ. N169-Լ որոշման N2 Հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված ՀՀ առանձին գյուղական բնակավայրում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու վարկի տոկոսադրույքը և տոկոսադրույքի սուբսիդավորման չափը կազմում է 12%:	10%
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	0-1% (հաշվի է առնվել սուբսիդավորման դրույքաչափը)	
Աջակցության սահմանաչափեր		
Երևան քաղաքում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	մայր գումարի մարման համար	ամսական մինչև 113,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 8.000.000 ՀՀ դրամը
	տոկոսագումարի մարման համար	ամսական մինչև 63.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 3,648,000 ՀՀ դրամը
ՀՀ մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	մայր գումարի մարման համար	ամսական մինչև 153,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 10,000,000 ՀՀ դրամը
	տոկոսագումարի մարման համար	ամսական մինչև 98,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 5,850,000 ՀՀ դրամը
ՀՀ կառավարության 17.02.2022թ. N169-Լ որոշման N2 Հավելվածով հաստատված ցանկում	մայր գումարի մարման համար	ամսական մինչև 200,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 12,000,000 ՀՀ դրամը

ընդգրկված ՀՀ առանձին գյուղական բնակավայրում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	տոկոսագումարի մարման համար	ամսական մինչև 140,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 8,660,000 ՀՀ դրամը
ՀՀ սահմանամերձ բնակավայրում բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	մայր գումարի մարման համար	ամսական մինչև 242,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 14,000,000 ՀՀ դրամը
	տոկոսագումարի մարման համար	ամսական մինչև 177,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 11,085,000 ՀՀ դրամը
Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքում	մայր գումարի մարման համար	ամսական մինչև 277,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 16,000,000 ՀՀ դրամը
	տոկոսագումարի մարման համար	ամսական մինչև 207,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 12,668,000 ՀՀ դրամը
Աջակցության ամսական սահմանաչափերը (մայր գումարի և տոկոսագումարների) չեն կիրառվում ժամանակացույցով նախատեսված առաջին ամսվա վճարների նկատմամբ:		
Փոխհատուցվում են նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածով և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վճարները, սեփականության իրավունքի գրանցման վճար՝ 25,000 ՀՀ դրամ և 20,000 ՀՀ դրամ պետական տուրք, գրավի իրավունքի պետական գրանցման վճար՝ 25,000 ՀՀ դրամ և 1,000 ՀՀ դրամ պետական տուրք: Սահմանամերձ բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար վերը նշված օրենքներով սահմանված վճարները գանձվում են 50%-ի չափով:		
Բանկի միջնորդավճարներ և տույժեր		
Վարկի տրամադրման միանվագ վճար		Չի պահանջվում
Վարկի սպասարկման ամսական վճար		Չի պահանջվում
Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք		Չի սահմանվում
Ժամկետանց մայր գումարի տույժ		0.1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ		0.13 % օրական
Գրավ և ապահովագրություն		
Վարկի ապահովման միջոց		Ձեռք բերվող անշարժ գույք, անշարժ գույքի գնման իրավունքը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բնակելի անշարժ գույք:
Գրավի գնահատում		Գրավը ենթակա է գնահատման Ֆասթ Բանկ ՓԲԸ-ի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության կողմից
Վարկ/գրավ հարաբերակցությունը		Մինչև 99% Երևանում՝ անշարժ գույքի արժեքի մինչև 90 %-ի չափով ՀՀ մարզերում՝ անշարժ գույքի արժեքի մինչև 97.5 %-ի չափով Սահմանամերձ բնակավայրերում*՝ անշարժ գույքի արժեքի մինչև 99%-ի չափով (*Համաձայն Կառավարության 2014թ. թիվ 1444-Ն (Հավելված 1.), և այն վարկերի դեպքում, երբ շահառուն ունի առնվազն 4 անչափահաս երեխա կամ հավաստագրում ներառված ընտանիքի բոլոր անդամների 65 տարին լրացած է:
Ապահովագրություն		<ul style="list-style-type: none"> Գրավադրված գույքի ապահովագրություն Վարկառուի և համավարկառուների՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրություն: <p>Վարկի մնացորդային գումարի չափով (վարկի մնացորդային գումարի հաշվարկում չի ներառվում պետության կողմից տրամադրվելիք աջակցության գումարը)</p>
Վարկառուի/ համավարկառուի / գրավատուի նկատմամբ ներկայացվող պահանջ		
Վարկառու/համավարկառուի նկատմամբ պահանջ		Արցախի Հանրապետության առանձին շրջաններում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ բնակված կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված, առնվազն վերջին երեք ամիսներին 2 փաստացի բնակված կամ վերջին երեք տարում փաստացի բնակված և Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքն է (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած), այդ թվում՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տվյալ ընտանիքում ծնված երեխան, բացառությամբ այն ընտանիքների (անձանց), որոնք որևէ ծրագրի շրջանակներում գործուղվել են Արցախի Հանրապետություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը և վերջին երեք ամիսներին բնակվել են այնտեղ: Պարտադիր բնակության պահանջը տարածվում է ընտանիքի՝ առնվազն մեկ անդամի վրա: Ընտանիքի բացակա անդամները դիտվում են շահառու և ընդգրկվում են տվյալ ընտանիքի կազմում, եթե նրանց բացակայությունը պայմանավորված է բուժման կամ ուսման կամ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության կամ ազատագրվման դատապարտվածների պատիժը կրելու հետ:
Գրավատուի նկատմամբ պահանջ		Ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է շահառու ընտանիքի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող բոլոր անդամների (բացառությամբ երեխաների և այն համավարկառուների, որոնք չեն հանդիսանում ընտանիքի անդամ) անունով:

<p>Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ</p>	<p>Վարկի համար դիմելու պահին վարկառուն/համավարկառուները չպետք է ունենան ժամկետանց, ինչպես նաև «ստանդարտ»-ից խիստ դասով դասակարգված գործող վարկային պարտավորություններ:</p>	<p>Համաձայն ԲԵ «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման կարգի» պահանջների: Ընդ որում, ամսական մարումների հաշվարկում որպես վարկի գումար կարելի է ընդունել վարկի պայմանագրային և պետության կողմից տրամադրվող աջակցության գումարների տարբերությունից ստացվող գումար:</p>
<p>Վարկունակության գնահատում</p>	<p>Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամը , ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում (կետի դրույթը չի կիրառվում գործող ժամկետանցման դեպքում)</p>	
<p>Այլ պայմաններ</p>		
<p>Վարկի տրամադրման եղանակը</p>	<p>Անկանխիկ՝ Ձեռքբերում՝ միանվագ կամ փուլային</p>	
<p>Վարկի մարման կարգը</p>	<p>«Անուիտետային» (հավասարաչափ ամսական մարում), որում մայր գումարը և կուտակված տոկոսները ներառված են փոփոխական մասերով:</p>	
<p>Այլ պայմաններ</p>	<ul style="list-style-type: none"> • Երևան քաղաքում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման նպատակով աջակցությունը տրամադրվում է բացառապես այն անձանց և նրանցից սերված ընտանիքներին, ովքեր նախքան Արցախի Հանրապետությունում բնակվելն ունեցել են Երևան քաղաքի հաշվառում: • ՀՀ մարզային բնակավայրերում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման նպատակով աջակցությունը տրամադրվում է բացառապես այն անձանց և նրանցից սերված ընտանիքներին, ովքեր նախքան Արցախի Հանրապետությունում բնակվելը հաշվառված չեն եղել Արցախի Հանրապետությունում • Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց (բացառությամբ ընտանիքի անդամների) անունով գրանցելու դեպքում (անկախ բաժնեմասի չափից) դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը • Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը • Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակելի անշարժ գույքը օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով • 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ձեռք բերվող անշարժ գույքը չի հանդիսացել շահառու ընտանիքի որևէ անդամի սեփականությունը, այդ թվում՝ չի պատկանել բաժնային սեփականությանը: 	
<p>Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության ժամկետ</p>	<p>Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 30 օրացուցաին օր</p>	

Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը կարգավորվում են «Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության» ծրագրով սահմանված կարգով և պայմաններով:

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի հիփոթեքային վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

Ծանոթություն

1. Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով.
 - Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
 - Իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
 - Նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ

Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույթաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

2. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365/366 օրվա հաշվարկից
3. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարին, հետևյալ հերթականությամբ՝ տույժեր, սպասարկման վճարներ, տոկոսներ, վարկի գումար: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

4. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

5. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

6. Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:

7. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, վարկառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- Վարկառուի, Գրավի և Երաշխավորի (առկայության դեպքում) համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
- Վարկառուի բավարար եկամուտներ

10. Վարկի մերժման գործոններն են.

- Վարկատեսակի պայմաններին անհամապատասխանություն
- Հաճախորդի գոնծող ժամկետանց և/կամ հատուկ դասերով դասակարգված վարկային պարտավորություն/երաշխավորություն
- Անբավարար եկամուտներ(եկամուտների ուսումնասիրության դեպքում)
- Վարկարժանության ոչ բավարար մակարդակ
- Բանկի տեսակետից գրավի իրացվելիության ոչ բավարար մակարդակ
- Բանկի համար անցանկալի հաճախորդ
- Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում
- Վարկի վերադարձելիությունը կասկածի տակ դնող տեղեկատվության առկայություն
- Հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայություն
- Այլ հիմքեր

11. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս գրկվի իր սեփական գույքից:

12. ԶԳՈՒՇԱՅՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱԿԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՁԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՅՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵՎ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՍԵԼ ՁԵՐ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՄԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԸ Է ԹՐԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՐ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍՎՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: